

ՃԱՐԺԻ ՏԾՐԵԳԻ ԹՈՒԹԻՒՆՆ ՀԱՅՈՑ ՄԵԶ

Ա.

Աղէտներ կան, որ իրանք մարդիկ ևն պատրաստում. Ալդ-պէս են, օրինակ, ելուզակութիւնները, բռնի գաղթականութիւնները, կոտորածները, ներքին պատերազմները և այլ ընտանեկան պէսպէս երկառակումները, թէ որքան անսնղ զոհներ են եղել աղղափիսի հարուածների ժամանակ, որքան չէն ու ծաղկեալ աւաններ, քաղաքներ, մինչև անդամ ամբողջ գուտաններ ամարութեան են դատապարտուել նոցա երեսից, քանիք քանիք անդամ անբերութիւն, սով, ժանտախտ և ալլն լաջորդել են ալդ աղջտներին և առաւել ևս թշուառացուցել մարդուա վիճակն աշխարհիս երեսին, տեղը չէ մի առ մի թուել. Պատմութիւնն, անչուշտ, բոլորովին ակ կերպարանք կունենար, եթէ մարդուա կիրքն աղղափիսի տգեղ, աւերիչ արտայլառութիւն չունենար անցեալում. Մխիթարականն ալն է, որ ժամանակի ընթացքում բարքերն անհամեսատ աւելի մեղմացն և աղնուացն, և ալնպիսի աղէտների պատահումը բարեբաղդաբար հեռու է քաղաքակրթեալ աշխարհներից.

Նոյնը չէ կարելի ասել այն աղէտների մասին, որոնք բնութեան երեսութիւնների արդասիք են. Մարդս միանգամալն անզօր և անընդունակ է, մաքառելու և արգելելու նոցա պատահումը, Եւ իբրափի, Բնչ է խակապէս մարդուա զօրութիւնն ալնպիսի ահաւոր և անբռնաբարելի հարուածների դէմ, ինչ-պէս են հաբուղնը, շարքը, ջրհեղեղը, կարկուտը, կալծակը, երաշտը, մորախն և ալլն. Եւ կալ արդեօք մեր հալբերի տարեգրութեան տիսուր էջերի մէջ մի տեղ, ուր արձանագրուած չինի նոցա լիշատակութիւնը. Մարդկալին բարքերի որպիտութիւնից ամեննեին կախումն չունի աղղափիսի աղէտների կրկնութիւնը կամ դաղարումը. Քաղաքակրթութիւնը, որքան

և զարգացած լինի, անընդունակ է նոցա առաջն առնելու Արդի գիտութեան միջոցով մարդիկ ընդունակ են բացարելու բնութեան երևոլթներն և ըմբռներու նոցա իսկական պատճառը, բայց թէ նոքա կարող են հասնել ախաղիսի զարգացման, որ զեկավարեն և ուզզութիւն տան նոցա, ալդ շատ կասկածելի է: ԶԵ որ ամէն մի փոփոխութիւն, որ տեղի է ունենում տեղերքի մէջ, ունի իւր անկախ պատճառը, որի վերալ մարդս ոչ մի ազդեցութիւն չունի, ինչպէս որ բնութեան մէջ ցրտի ժամանակ ջուրը սառչում է, կամ տաքի ժամանակ՝ չոդիանում, և մարդ անկարող է արգելել ալդ երկու երեսութները, կամ փոխել նոցա բնութիւնը, նմանապէս էլ երկրացնդի կեանքի մէջ տեղի են ունենում բնական ախաղիսի փոփոխութիւններ, որոնք անհրաժեշտ են և որոնց հանգէս գալուն ոչ մի մարդկալին զօրութիւն արգելք լինել կարող չէ: Այս հանգամանքն է, անշոշտ, պատճառ, որ մարդիկ երբեմն բնութեան պարզեած աղլաներն համարում էին պատճառատ բարկութեանու նշան կամ «մեղաց պատիժ»:

Բնութեան հարուածների ազգեցութիւնն հաւասարապէս տարածւում է ամէնի վերալ, Խարութիւն չկալ, թէ մարդապնիւ ու մեղմ բարքի տէր է թէ ընդհակառակը, կամ թէ մարդս աշխարհի զորաւորներից է, թէ աղքատ և անօգնական մէկը: Հարուածներն անակնկալ հասնում սպառում են մեր վաստակներն և խլում են մեր կեանքի, և դոլութեան ապահովութիւնը, ցուրտը միանգամից տանում է մեր ալգիները, ժանգն ապականում է մեր արտերը, թրթուրը, մորախը, մուկը չեն խնալում, տարածւում ոչնչացնում են մեր քրտնքի պտուղները, նոցանից ոչ պակաս ծանր վնասներ են, տալիս մեր հեղեղը, կարկուտն ու երաշտը, ի՞նչ են արդեօք մեր գործ զրած միջոցներն ալն ահազին կորուստների զէմ, որ ունենում ենք նոցա երեսից. չՔ որ շատ անզամ ալգիսի հարուածների հետևանքը լինում է թանգութիւն, սովոր ժանտախտ և ակամալ զաղթականութիւն. ինչնի կարող ենք մենք առնել դոցա առաջն, երբ ակներն է մեր անզօրութիւնը նոյն իսկ ալդ պատռհամներից որ և է մէկի առջն, թող թէ նոցա միահաղոյն բռնանալու միջոցին. Մենք ճգնում տքնում ենք միալն թուլացնելու հարուածների դառն տպաւորութիւնը միոր և է մեղմացուցիչ գործով, ինչպէս օրինակ կարկուտն արգելելու կամ երաշտի զէմ անձրեն բերելու մեքենական փոր-

ձերը, կամ կարկտից ապահովագրելու ընկերական պարման-ները, մարախը կոտորել տալու ջանքերը, թրթուրի սպառ-ման միջոցներն և այլն. սակայն բռն աղէտի նկատմամբ-աղպակիսի գործերն ալնքան նշանակութիւն ունին, որքան հա-սարակաց կարեկցութիւնն, երբ ամեն ոք իւր ձեռնհասու-թեան չափ շտապում է հարուածեալների կրած զրկանքի տեղը-լցնել իւր կամաւոր տուրքերով. Նեղութեան ժամին, ի հարկէ, լատ թանգ արժէ ալդ մարդասիրական գործունէութիւնը, քա-նի որ վնասը նիւթականին է վերաբերում և մարդկալին զո-հեր չկան. Խակ եթէ աղէտը վերջանում է անթիւ զոհերով, եթէ մահը կարկենական արագութեամբ անակնկալ տարձակ-ւում է և իւր անողոքելի ճիրանները տարածում է բազմա-մարդ բնակավարերի վերալ, Բնչ կարող ենք անել մենք, Բնչ կարող է անել զարգացած գիտութիւնն ու հանճարը. Ալսուեց-ահմ կտտարելապէս փալլում է մեր անզօրութիւնը. Մեր գի-տակցութեան մէջ միաւում բնեռուում է ալդ սարսափն առա-ւելապէս սովի, ժանտախտի և շարժի ժամանակ. թէ ալդ ա-ղէտներից որն է աւելի շատ զոհեր տանում, ապարազգարար, ծշղել անհնարին է. գիտենք որ սովին հացով, ժանտախտին-առողջապահական միջոցներով և թժկներով գիմադրել կարելի-է, և փրկել մարդկալին կեանքը, խակ շարժին, որ անակնկալ մի հարուած է, գրեթէ ակնթարթի տեղութեամբ, ոչ մի հնար չունինք կեանք ազատելու. և ալս խակ է շարժի ամե-նավտանգաւոր լատկութիւնը. Եթէ աշխարհը շարժի երեսից-անդառնալի կորոստներ ունեցել է, ալդ ոչ թէ քարուքանդ-եղած շէնքերն են, որոնք կարող են վերստին կանգնել ա-ռաւել ևս շքեղ և հաստահիմն քան լառաջ էին, ոչ թէ կորած ոչնչաց ծ՝ գանձերն ու ստացուածքներն են, որոնք աշխատանքի ճանապարհով վերստին էիտ են զալիս, ալլ ալն մարդկալին զոհերն են, որոնք լանկարծակի առանց խտրու-թեան հասակի, սեռի և աստիճանի մի քանի վալրկենում իրենց գերեզմանը գտնում են անսպասելի և ահարեկող ա-մբաման տակ. Լինում են, ի հարկէ, և ազատուողներ, սակայն ոչ մարդէկ, ոչ էլ գիտութիւնն ամեննեին նշանակութիւն չու-նին ալդ փրկութեան գործի մէջ, ալլ միմիալն նախախնամու-թիւնը. 79 թուին օգոստոսի 24-ին Վեսուվի հրաբուղին իւր մոխրի և լաւալի տակ թաղեց Պոմպէլի քաղաքը, որ մի քանի տարի առաջ արդէն վնասուել էր երկրաշարժից. դարեր անցան.

1689 թուին պեղումների միջոցով լատնուեցաւ աղ քաղաքը, որի մեծագոյն մասն այսօր արդէն բացուած է և դրեթէ փըրկուած, մենք կարող ենք ամեմ տեսնել նորա բոլոր շէնքերը, հրազդակները, փողոցները, գործաներն ու դորժիքները, կանկարատիքն և ալլն ախալէս ինչպէս ալդ ամենն եղել է աղետի պատահման վայրկենին, սակալն ուր են նոցա տէրերն ու վալելողները. չկար ախտեղ դէթ նշողն ախ կենդանութեան, որով կանգուն էր աղ քաղաքն աղէտից լառաջ, անագորոյն հարուածը չխնալից. մինչև անգամ երեցն Պլինիոսի կեանքին, որ ժամանակի հզօրներից և գիտուններից մէկն էր Ակապէս՝ դարերի ընթացքում կործանուել են քաղաքներ և աւաններ և զո՞ն են եղել շարժին հազարաւոր և քիւրաւոր մարդիկ առանց որ և է ցաւի, հիւանդութեան կամ համաճարակի հանդիպած լինելու ախալէս, ինչպէս մի կենդանի անտառ լանկարծակի զո՞ն է լինում ծախիչ կրակին կամ մի բուրաւէտ փարթամ ծաղկոց մի ակնթարթի մէջ խամրում թառամում չորանում է լանկարծակի խորչակից. Թէ զո՞ների թիւը որպիսի մեծ չափերի է հասնում շարժի ժամանակ, բաւական է լիշել մեր տարեգրութեան հետևալ տեղեկութիւնները.

735 թուին Վալոց Չորում ողջողջ գետնի տակ անցան տասն հազար մարդ, Դուին քաղաքում 854 թուին մի գիշերուալ մէջ մեռան 12 հազար մարդ, իսկ 869 թուին, երբ շարժը տևեց մի տարի, զո՞ն եղան 120 հազար մարդ, երդն-կալ քաղաքում 1268 թուին մեռան 15 հազար, 1458-ին 32 հազար, 1482-ին 30 հազար, 1584-ին 15 հազար մարդ, և ալլն.

Եթէ մինչև անգամ մտածենք, որ ալս թուերն անձիշդ են, որովհետև հին ժամանակներն առ հասարակ գծուարին էր վիճակարութիւն կազմնել, ախ էլ շարժի նման աղէտի միջոցին, անուամենալին նոքա մօտաւոր զաղափար տալիս են շարժի տարած զո՞ների մասին. Զենք կարող մտածել սական, որ ալդ թուերը շատ չափաղանցօրէն լիշուած լինին, քանի որ գիտենք թէ 1868 թուին Հարաւալին Ամերիկայում մեռան շարժի ժամանակ 54 հազար մարդ։ Եւ միթէ հարկ կալ ճիշդ թուեր որոնելու. տարեգրութիւնն ախքան պերճախօս փաստեր է տալս շարժի պատճառած անփոխարինելի կորուստների մասին, որ բաւական է միալն լիշել մի քանի

քաղմամարդ վաճառաշահ մեծ քաղաքների մէջ պատահած շալժի լաճախութիւնը, որպէս զի համոզուինք, թէ այն մութ դարերում աւելի ընդարձակ կարող էր լինել մեռածների թիւը, քան մնաք մոտածել կարող ենք մեղ հասած հատուկոր տեղեկութիւններով. չէ՞ որ լիշտակարանների մէջ ընդհանրապէս աւելի շատ հանդիպում ենք ալնպիսիններին, որոնք ամնեին չեն էլ լիշում մեռածների թուի մասին, մինչդեռ արհասիրքի լանկարծական պատահումն, այն էլ երբեմն գիշեր ժամանակ, մեղ ենթադրել է տալիս կոտորածի աներևակալել լի չափը. Ալսպէս օրինակ շարժին լաճ ախակի ենթակալ են եղիլ հետեւեալ մեծ քաղաքներն իրենց գաւառներով.

Դուին 854, 858, 869 և 893 թուերին.

Երդնկալ 1011, 1045, 1165, 1236, 1251, 1268, 1281,

1287—1289, 1458, 1482 և 1534 թուերին.

Վան 1276, 1646, 1648, 1701, 1704, 1715 և 1791

թուերին.

Արդրում 1659, 1791, 1843, 1850—1852, 1860—1861,

1901—1902 թուերին.

Թաւրէղ 1641, 1646, 1791, 1859 և 1872 թուերին.

Շամախի 1806, 1828, 1847—1848, 1859, 1869, 1872 և

1902 թուերին:

Այս թուանշանները ցորց են տալիս թէ շարժի երեսլթը մեր երկրում, կարծես, իւր լատուկ ժամանակազրութեան հոսանքն է ունեցել. թէ աւելի հին դարերում ուր և երբ է տեղի ունեցել ալդ երեղթը, մասամբ կըտեսնուի տարրերութեան լաջորդական թուերով. Թ. դարում շարժի նկարագրութիւններն առաւելապէս Դունի և նորա լրջականների վերակեն կեդրոնացած, որից ի հարկէ չենք կարող եղրակացնել, թէ ալդ լրջանակից դուրս միենալուն ժամանակում շարժեր չեն եղել, անուհետեւ ԺԱ. դարից մինչև ԺԷ դարը շարժի հարուածներին ենթակալ է եղել Սրբնիա քաղաքն և իւր դաւառը, ԺԳ—ԺԸ դարը նոյն աղէտին ենթարկուել է Վան քաղաքն իւր շրջականներով, ասկա ԺԷ—Ի դար Արդրումը, և ԺԹ—Ի դար Շամախին, Շատ բնական է, որ ալդ քաղաքների և գաւառների երկրաբանական պատճառուներն են լառաջ բերել շարժ և ալդ կողմից շատ հետաքրքրական է ուսումնասիրել այն փլատակինները, որոնք շարժի տեղերում պատկերացնում են մեր երկրի ներքին կազմութեան ակամ այն լատկութիւնը:

Շարժի ժամանակի և վնասների մասին ընդհանուր զաղափար կազմելու համար բաւական է լիշել մեր քաղուածների համառօտ բովանդակութիւնը, որ է այս.

602—603 թ. Տարօնում շարժ եղաւ և փլաւ ո. Կարապետի վկանքը:

735 լուլիսի 21-ին Վալոց Զորում սաստիկ շարժ եղաւ, որ անեց քառասուն օր. մօտ տասն հազար մարդ ողջ-ողջ գետնի տակ անցան:

800—802 թ. սաստիկ շարժ եղաւ. Կողոտու լեռներն իրար գիւղան. սարի մէկը փուլ եկաւ, ընկաւ Եփրատի մէջ, որի հոսանքը մի օր արգելուեցաւ, շատ լեռներ պատառուեցան. շատ տեղ աղբիւրներ բացուեցան, և շատերն էլ խափանուեցան:

854 թ. մեծ պասին շարժ եղաւ Դուինում, մի գիշերուակ մէջ տասներկու հազար մարդ մեռան:

858 թ. սաստիկ շարժ եղաւ Դուինում. աներ, ապարաններ և պարիսպներ փուլ եկան, շատ մարդիկ վնասուեցան.. ձմեռուակ սաստիկութիւնից շատերն էլ ցրատար եղան:

863 թ. մեծ պասին սաստիկ շարժ եղաւ և անեց մօտերեք ամիս. շատ գեղեցիկ շինուածներ տապալեց և մեծ կոռած պատճառեց:

869 թ. սաստիկ շարժ եղաւ Դուինում, որ անեց մի տարի. անդունդն անցան մօտ 120 հազար մարդ:

893 թ. սաստիկ շարժ եղաւ Դուինում գիշեր ժամանակ. շատ շինուածներ փուլ եկան. վնասուեցան կաթուղիկոսարանի եկեղեցին և ուրիշ վկալարաններ. հողի տակ մնացին շատ մարդիկ. մեռնողներն անքան շատ էին, որ բոլորի համար գերեզմանի տեղ չեղաւ, շատ դիակներ միասին ձգում էին. փոսերի և դարավիակների մէջ:

995 թ. շարժ եղաւ. աւելի խիստ էր Զորրորդ Հալք, Հաշտեանք, Խորձեան, Ծոփք, Բալու և Պաղնատուն. շինքերն հիմնալատակ եղան. սարեր ու ժալուեր պատառուեցան. անջրդի տեղերում ջուր բղիսեց, իսկ սովորական ջրերը ցամաքեցան. դաշտերն ալէկոծւում էին և լեռներն իրար էին դիպչում. փոշին ինչպէս ծուխ բռնել էր օդի մէջ. քաղաքներ,

գիւղեր, ապարակներ քանդուեցան և իրենց տակն առան բը-
նակիչներին, որոնք մեռան, մի մասն հաղիւ կիսամեռ ազա-
տուեցաւ. Բայովի բերդն իւր շինուածքներով և Բալուի Քարը
փուլ եկան, Վնասուեցան շատ տեղերի գեղեցկաշէն եկեղե-
ցիներն ու ապարանները. Այս շարժը տեսց մօտ եօթն ամիս
այն է Քաղոց ամսի վերջներից մինչև Նաւասարդ:

1003—1004 թ. սաստիկ շարժ եղաւ ամեն տեղ. Շատ
մարդ և անասուն կոտորուեցան:

1011 թ. Առաջաւորաց շարթուն սաստիկ շարժ եղաւ.
Նրգնկան կործանուեցաւ. շատ բերդեր և եկեղեցիներ տապա-
լեցան:

1045 թ. սաստիկ շարժ եղաւ, շատ եկեղեցիներ փուլ ե-
կան Եկեղեցաց գաւառում. Նրգնկա քաղաքն էլ քանդուեցաւ.
Ֆրկիրը պատառուեցաւ, և շատ մարդիկ ընկղմեցան. Երկար
ժամանակ անդունդներից լսելի էին աղաղակի ձայներ. Շար-
ժը պատահեցաւ ամառ ժամանակ և ամեն օր շարժ էր լինում.
Այն ամառը խաւարում էր. արեգակն ու լուսինն արեան
գոյն ունէին:

1114 թ. Մարերի 12-ին սաստիկ շարժ եղաւ գիշեր ժա-
մանակ. շատ տեղեր քանդուեցան. կործանուեցան Սամուսատ,
Հասան Մսուր, Քեսուն, Ռապան, Մարաշ, որ բազմամբոխ
քաղաք էր, ուր մեռան մօտ քառասուն հաղար մարդ. Կոր-
ծանուեցան Սիս քաղաքը, շատ գիւղեր ու վանքեր. վնասուե-
ցան հաղարաւոր բիւրաւոր մարդիկ. Սև լերան վերալ Բար-
սեղեանց անապատում կրօնաւորներից 30 հոգի և երկու վար-
դապետ եկեղեցու տակ մնացին. նմանապէս Մարաշի մօտ Յե-
սուանց անապատում վանքը քանդուեցաւ և կրօնաւորները
տակը մնացին. Նըր շարժը դադարեցաւ, մկնեց ձիւն գալ,
և շատերը ձեան տակ կոտորուեցան:

1138—1139 թ. սաստիկ շարժ եղաւ. կործանուեցաւ
Գանձակ քաղաքը և բնակիչները մնացին վլատակների ներ-
քև Փուլ եկաւ Աշհարակ սարն և ձորակի առաջը փակեց,
ջուրը կանգ առաւ և եղաւ լիճ. Նրկու վարդապետ ընկղմե-
ցան շարժից. Հաղբատու եկեղեցին փուլ եկաւ.

1157 թ. շարժ եղաւ ամեն տեղ և տեսց մօտ տասն և
չորս ամիս.

1165—1166 թ. շարժ եղաւ Նրգնկալում:

1236 թ. շարժ եղաւ Նրգնկալում և վլաւ մի եկեղեցի.

- 1251 թ. շարժ եղաւ և քանդուեցաւ Երզնկան,
 1261 թ. Կիլիկիալում շարժ եղաւ. Վրաստանումն էք
 շարժ եղաւ և շատ վնաս տուեց.
 1268 թ. Երզնկալում շարժ եղաւ, տասնհինգ հազար
 մարդ մեռան.
 1281 թ. Երզնկալում շարժ եղաւ.
 1285 թ. շարժ եղաւ Տիմիսու,
 1287 թ. շարժ եղաւ Երզնկալում, շատ մարդիկ մեռան.
 1289 թ. շարժը կործանեց Երզնկան.
 1319—1320 թ. սաստիկ շարժ եղաւ արևելքում. և. Թա-
 դէսս Առաքելու վանքը կործանուեցաւ, եօթանասուն և հինգ
 հոգի մեռան, Նմանապէս շարժ եղաւ Դեղարքունիքում, ուր-
 շատ գիւղեր քանդուեցան.
 1363 թ. շարժը տարաւ Մշու երկիրն և շատ վանքեր
 խախտէց.
 1439 թ. Մըմրուտ սարը կրակ ընկաւ և շատ տարի ակ-
 րեց այն սարերը (Դրգուռի հրաբուդիւր).
 1458 թ. Երզնկալում շարժ եղաւ, երեսուն երկու հազար
 մարդ մեռաւ.
 1482 թ. Երզնկալում շարժ եղաւ. երեսուն հազար հոգի
 գետնի տակ մնացին.
 1543 թ. ապրիլի 4-ին առաւօտեան սաստիկ շարժ եղաւ
 և շատ աւեր պատճառեց.
 1584 թ. լուսիսի 17-ին շարժ եղաւ Երզնկալում, քա-
 ղաքը քանդուեցաւ, և մեռան տասն և հինգ հազար մարդ.
 հինգ հազար մարդ գետնի տակ մնացին.
 1641 թ. շարժ եղաւ Թաւրիկում և շրջակալքում, փուլ
 եկան գեղեցիկ շինուածներ.
 1646 թ. ապրիլի 2-ին Աւագ Ուրբաթ գիշեր սաստիկ
 շարժ եղաւ Վան քաղաքում և շատ մարդիկ մեռան, Փուլ ե-
 կաւ Վանակ բերդի մեծ մասը. Նոյն տարին շարժ եղաւ թաւ-
 րիկում.
 1648 թ. սաստիկ շարժ եղաւ Վանում և շրջակալքում.
 քաղաքի պարսպի կէսը քանդուեցաւ. փուլ եկան եկեղեցիներ
 և մզկիթներ.
 1668 թ. օգոստոսի 7-ին սաստիկ շարժ եղաւ և շատ
 քաղաքներ ու գիւղեր կործանուեցան.
 1679 թ. շարժ եղաւ Երեանում.

1692 թ. ապրիլի 18-ին սաստից արեգակը խաւարեցաւ, այնպէս մութն էր, որ մարդիկ իրար մօտ գալով իրար չէին տեսնում. Սաստիկ շարժ եղաւ.

1701 թ. մարտի 7-ին սաստիկ շարժ եղաւ Վան քաղաքում, և գիշերը կրկնուեցաւ. մի քանի օր շարժը կրկնում էր. մարդիկ դուրս փախան և վրաններում կամ բացօղեալ ապրում էին, Շատ տներ խախտուեցան, Նորեմբերի 30-ին դարձեալ սաստիկ շարժ եղաւ և վաստանեցաւ.

1704 թ. լուսվարի 13-ին շարժ եղաւ Վանում ու լունգարի 27-ին Բաղէշում. շատ տներ քանդուեցան և շատ մարդիկ մնացին տների տակ.

1707 թ. լուսի 5-ին շարժ եղաւ.

1715 թ. մարտի 8-ին շարժ եղաւ Վան քաղաքում և շրջակալքում. ո. Բարթուլիմէոս Առաքելոյ վանքի զմբէթը թռաւ, Խօշապատ բերդի պարիսպը խախտուեցաւ. վասուեցան շատ գիշերը. Արճիշու եկեղեցին վլաւ և երեսունեօթ մարդ տակը մնացին, որոնցից մէկը մեռաւ, միւսներն ազատուեցան մնծ մասով խեղացած.

1791 թ. գնկտեմբերի 27-ին սաստիկ շարժ եղաւ Թաւրէկ քաղաքում, որը կործանուեցաւ և անթիւ մարդ մեռաւ, շրջակալքում ևս շատ վնաս եղաւ՝ Խոլ, Սալմաստ, Ուրմիա, Գունալ և ալլն. Վանումն էլ շարժ եղաւ, բայց վնաս չեղաւ. Այս շարժի սկիզբն էր 1790 թուին, երբ Արզում քաղաքն և շրջակալքը, նմանապէս Բասենու գաւառը, մեծամեծ վնասներ կրեցին. ալդ իսկ աղէտի վերալ երգում են եղել և մի երգ, որի խօսքերից են *).

աՅսառերկու թիւ երեսուն իննին (1239 թ.)

Աստուծոյ բարկութիւնն հասաւ ինսանին,

Առանց պատանքի մեռել կըթաղեն,

Մի տար, Աստուծած, մի տար զար Բասենին».

Այս ամենին եթէ աելացնենք ԺԹ դարում տեղի ունեցած շարժերի լիշտակութիւնն, այն ժամանակ մեր տեղեկութիւնների ծառալը կընդարձակուի ալսպէս.

1806 թ. շարժ եղաւ Շամախի.

1827 թ. շարժը վնասեց մի քանի տեղեր Արարատեան երկրում, նոցա մէջ և Ուշուաւ ու Կեչառիսու վանքերին. Հետևակալ 1828 թուին շարժ եղաւ Շամախի.

* յ 8. Բաղմալիս 1862.

1840թ. հունիսի 20-ին մեծ շարժ եղաւ ամեն տեղ, և
տեսնց մինչեւ սեպտեմբերի 28. Մասիս սարը պատառուեցաւ.
Ակոսի գիւղը ո. Յակոբալ վանքի հետ միասին կարծանուեցան.
շարժը մեծ վնասներ տուեց Նախիջևանին, Բալաղիսին,
Մակուին, Թաւրէղին, Տաթևին, Կաղզուանին, Տփխիսին, Ար-
զրումին և այլն (ա. մանրամասնութիւնները Շահն. Ստոր.
366). Այդ մեծ շարժի տպաւորութիւնը ժամանակակիցների
վերալ ալնքան սարսափելի էր, որ աշուղ Ազբար Աղամի Աս-
տուածալին բարկութեան նշան էր համարում ալդ. պատու-
հասից չպրծան ոչ հալ, ոչ թուրք, ոչ ճնուզ, ոչ ասորին. լու-
զուած և սարսափած նա երգում է.

«Ո՞վ էր տեսել էս աշխարհս էս օրին,
Մեր մեղացն շարժը քանդեց Ակուին,
Զարհուրելի էր շարժի եկած օրը.
Սար ու ձոր իրար դիպան, ասեմ որը,
Մէրը որդուն, որդին մոռացաւ հօրը,
Սարսափանք էր նալելիս Մասսալ սարին,
Լերին քակեալ, թնդաց, որոտաց ձորը,
Ախմիշ էլաւ, եկաւ ձիւնաբեր ջուրը,
Հոսեաց տարաւ վանք, աւաղան, աղբիւրը,
Դիփի հաւաքեց, ածեց լանդունզա խորին,
Բարկացել էր մեր Արարիչն էս հետին,
Իրար գիւպաւ, շարժեց երկինքն ու գետին,
Չի խնայեց սուրբ Յակոբ հալրապետին,
Որ քեռի էր Լուսաւորիչ Գրիգորին։

Մասիսի նոր պատառուածը գրեթէ փոխեց բոլորովին
Նախիլին տեղաղրութեան պատկերը. մինչեւ լուլիսի 5 ցելսիս
հեղեղը, վերից վար հոսելով, քանդեց տապալեց ամեն ինչ.
Ակոսի գիւղի բրզանե տեղը բարձրացաւ, ալն տեղերն, ուր
լառաջ Ակոսու տափերն ու ալգիներն էին, քարակուտակ և
սառցակուտակ տարածութեան փոխուեցաւ։

1843թ. հոկտեմբերի վերջերին շարժ եղաւ Արզրում,
ուր բերդի պարիսպը փուլ եկաւ և աներ քանդուեցան։

1847 լունվ. փարվ. 1848 սեպտեմբ. և 1849թ. շարժ
եղաւ Շամախի։

1850 և 1852թ. լունիս ամսին սաստիկ շարժ եղաւ
Արզրում, ուր մեծ վնասներ եղան. «Երջակալքում Քէվիլրլի
գիւղի մէջ մի մեծ տռւն իւր պարտէզով ու հողով իւր տեղից

ընկաւ հարիւր քալլ հեռու մի տեղ, իսկ նորա նախկին տեղի պատառուածից սև ջուր բղխեց *).

1859—1861 թ. շարժ եղաւ ամեն տեղ՝ Արզրում, Շամախի, Թաւրէզ և ալլն. միան Արզրումի շարժը մօտ երեք հաղար մարդու կորուստ ունեցաւ. Մեծ կորուստներ եղան և միւս տեղերում:

1869 թ. օգոստոսին շարժ եղաւ Շամախի, ալս շարունակութիւն էր 1868 թ. համատարած շարժի:

1872 թ. լունուար սեպտեմբեր շարժ եղաւ Շամախի, Գանձակ, Թաւրէզ և ալլն.

Ի վերջու 1899 թ. Ախալքալակ, 1901 հոկտեմբերից 1902 փետրուար Արզրում, 1902 լունուար 31-ից մարտ Շամախի սաստիկ շարժեր եղան, որոնք մնամեծ կորուստներ պատճառեցին:

Գ.

Խըրե բնական երնոլիթ շարժն իսկապէս չունի իւր հաստատուն բացատրութիւնը, կամ, աւելի ճիշդ ասած, այն բացատրութիւնները, որոնք կան, լայտնի են իրեւ ենթադրութիւններ:

Հայաստանի հին շարժերն արգասիք են հրաբղխալին երնոլիթների: Լեռների ձևը, հողալին շերտերի կազմութիւնը, բովերը, չերմուկները, լեռնական լճերն ու լճակներն և ալլն ալդ ենթադրութեան ապացուցներն են: Մարած հրաբուղիներ են, օրինակի համար, Մասիս, Արագած, Նպատ, Սիփան, Գըրգուռ (Նիմրուդ, Մամրուտ), Սաւալան, Սոնունդ և ալլն գագաթները: Հրաբղխալին ծագումն ունին Գեղամակ ծովը, Գալատուար լիճը, Արագածի և Գրգուռի կատարների լճակները, որոնք հրաբղխի ջրալիր բաժակներ են: Սակայն կարելի չէ միանդաման պնդել թէ մեր երկրի բոլոր շարժերն հրաբղխալին են. Ուրիշ երնոլիթներ էլ կան, որոնց աղղեցութեամբ երկիրը շարժ է լինում. նոցա մէջ ամենից լառաջ լիշելու է արեդակի բոլորական խաւարումը, որ շարժի պատճառ է լինում: Ալդ ենթադրութեան տեղիք տուողն ալն է, որ դիտած չեն թէ 18 երկրաշարժից 13 տեղի է ունեցել արեգակի խա-

*.) Տես Բաղմակ. 1862.

Հարման Ժամանակից Մեր տարեգրութեան մէջ ալդ երևոլթին հաստատութիւն գտնում ենք 1045 և 1692 թուին, երբ արեգակի մնջ խաւարումն և մի և նոյն ժամանակ համատարած շարժ եղաւ, Գիտենք, որ 1868 թուին օգոստոսի 18-ին խաւարեցաւ արեգակն և ապա տեղի ունեցաւ ամենասարսափելի շարժերից մէկը 1868—1869 թուերին, որ համատարած էր Ս. Աւեաարանի մէջ էլ գտնում ենք նոյն երևոլթի հաստատութիւնը. լալտնի է, որ Քրիստոսի խաչելութեան ժամանակ արեգակը խաւարեցաւ և երկիրը շարժ եղաւ (տ. Մատթ. Իէ. 45, 51—52, Մարկ. Ժ. 33 և 38. Պուկ. ԽՊ. 44 և 45). Այս բոլորական խաւարումն էր, որ 33 թուի մարտի 19-ին տեսանելի եղաւ Եղիպատոսում, Եթովլիալում և ալլն *).

Շարժի ալսպիսի կախումն ունենալն արեգակի խաւարումից միակ ապահով միջոցն է, որով մարդիկ կարող են նախապատճառուել աղէտի համար. աստղաբաշխներն, օրինակ, 1869 մարտի 1-ին Աթէնքում տեղի ունեցած շարժի մասին արդէն ամիսներ լառաջ ճիշդ գուշակել էին. Հալոց տարեգրութիւնների մէջ արեգակի խաւարման մի քանի տարիներ կան, ինչպէս են 614, 969, 1036, 1177, 1239 և 1717 թուականները. արդեօք ալդ թուերից մէկը կամ միւսը մի և նոյն ժամանակ շարժի թուական չէ. Գիտենք, որ մօտաւոր համաձայնութիւն կալ ալդ և շարժի թուականների մէջ. Անձնութիւնը կարելի է բացատրել կամ գրչի թերութեամբ կամ հեղինակներից մի քանիսի ժամանակակից չլինելով. Այս իշնիրը բաղդատական հետազօտութեան կարօտ է.

Արեգակի բոլորական խաւարումից զատ շարժի պատճառը համարում է արեգակի և լուսնի ձգողական զօրութիւնը. Ինչպէս լալտնի է, ալդ ձգողութեան ուժով ամէն օր լինում է ծովի մակընթացութիւնն և տեղատուութիւնը. Նոյանգործական զօրութիւնն ինչպէս որ ներգործութիւն ունի ալն ջրի վերալ, որ երկրիս երեսին է, ենթադրութիւն կալ, թէ նոյն զօրութեանն ենթակալ են և երկրագնդի խորքում գտնուող հեղուկները կամ երկրագնդի միջուկը կազմող նեղանիւթ ջերմ զանգուածը. Երբ որ արեգակն և լուսինը միաժամանակ այնպիսի կէտի են հասնում, որ երկուսը միասին զանուում են երկրագնդին տեղի մօտիկ դիրքի մէջ, նո-

*) Chronolog. Veterum, Seyfferth, Leipz. 1855.

ցա ձգողական զօրութիւնն աւելի ուժով է ազդում ստորերկ-
րեալ հեղուկների վերալ, որոնք մղուելով ներքեսից դէպի վեր,
դէպի երկրագնդի կեղեր, շարժ են յառաջացնում անպիսի
տեղերում, ուր երկրաբանական պալմանները նպաստաւոր են։
Քայտնի է, որ ստորերկրեալ անձաւներ և անջրպետներ կան,
որոնց մէջ երբեմն օդը չափաղանց խտանում է և, ձգտելով
դատարկ տարածութիւն գտնելու, ներքեմից ճնշում է դիտինն
և պատառում, Շատ տեղ գետինն ելեէ ջներ է անում նույն
ձգողական զօրութեան ուժով, մի տեղ գետինը բարձրանում
է սովորական մակերևութից, մի այլ տեղ նստում, Ակսոլիսի
դէպքերում հաւասարակշռութեան խանգարումն յառաջացնում
է շարժ, Այս երեսովի հաստատութիւնը գտնում ենք 735 և
995 թուերի շարժի նկարագրութեան մէջ, ապրեգիրն այն-
պէս է լիշում, իրբև թէ գետինն իւր բնակիչներով սուլում
ընկղումում է անդունդը, Այս ամենից զատ՝ դրտուած է, որ
շարժերի մեծ մասը տեղի է ունենում լուսնի ամենաբարձր
կէտում գտնուելու և երկրագնդի լուսնին ամենամօտիկ լինե-
լու ժամանակի նրբ շարժ է լինում, այն ամեն աղէտալի դէպ-
քերի հետ միասին, որ հանդիպում են մարդուն և նորա բնա-
կարանին, տեղի են ունենում և այլ անարկու տեսարաններ։
Սաստիկ որոտումներ ու ձաներ են լսում գետնի տակից,
երբեմն ալդ ձաներն հնչում են ինչպէս խիստ մրրիկ, գետի-
նը ճաքճաքում է, և երբեմն նորա պատառուածներն արա-
գութեամբ բաց ու խուփ են լինում, օդը սաստիկ մրրկում է,
շատ անգամ առանց արեի խաւարման մթնոլորտը բոլորովին
խաւարում է, մուալլ անարկու ամպերից լանկարծական որո-
տումներն անոելի տպաւորութիւն են գործում, տեղատարափ
անձրսը մերթ կարապետում է բուն աղէտին, և մերթ լոկ
նախազգուշութեան նշան տալիս, ծովը սաստիկ ալէկոծւում
է, և փոթորկը լուսանատական սարսափ աղղում, երկրի մա-
կերեսովի վերալ լանկարծ փոսեր և ուռուցներ են լաւանւում,
տներ, ագարակներ և այլ շինուածներ լանկարծակի սուզւում
ծածկում են գետնի տակ, հարծես յի ընդհանուր ցաւ պա-
շարում լափշտակում է տեսանելի աշխարհին և նորա ան ու
երկիւղը վրկում է միաժամանակ և մարդիկներին։ Տարեգրու-
թեան ամեն մի հատուածն ալս անաբեկութեան, ալս երկիւղի,
հակիրճ պատկերն է, որ մեզ զազափար է տալիս այն բնա-
կան փոփոխութիւնների մասին, որոնք մեր հին հայրենիքի

աարը, քարը, ձորն ու ղաշտը կրել են ստորերկրեալ, սանդարամնտական, ովերի բախումից և տիեզերքի բնական ընթացքի ընդհարումներից, Թողնենք, որ մեր տեղը խօսի հինգերի տարեգրութիւնը, որ քաղուածաբար զնում ենք ընթերցողի առաջ ժամանակակից պատմիչների և տարեգրների խօսքերով:

Գ.

Թ. 602—603. «ի նոյն ամի սուրբ Կարապետն, լիննակնեան տեղին էր, փլաւ. զի շարժ խստագոյն եղեւ»: Տ. Յովե. Ստմիկ. Գ. Բ.

Թ. 735 լումսի 21, Հրոտից 15.» խաւար անտեսանելի կալաւ զլողանն սահման, և զաւուրս քառասուն շարժեցաւ վալըն, և խորասովզ եղեալ ընկղմնցան կենդանւուն հոգիք իբրև տասն հաղար: Վասն ալնորիկ Վալոց Զոր անուանեցաւ»: Տ. Մովս. Կաղանկ. Գ. ԺԶ.

«Յանկարծակի եհաս ի վերուստ պատուհաս Տեառն և կալաւ խաւար շօշափելի զգաւառն ամենալի զաւուրս քառասուն, և շարժումն և դղրդումն սաստիկ. զի եռալր երկիրն ահեղ դողացմամբ լանդնդոց և բարձրանալր մինչև ի վեր և անդէն իբր զալիս ծովու վլուզանէր. Լերինք տապալէին, վէմք ի հյմանց քաքտէին, տունք և ապարանք զեղեցիկք լինէին գերեղմանք բնակչաց, աղբիւրք խցէին, գետք կորնչէին և ամենալի տեղի երերէր տատանմամբ, և ձալնք մարդկեղէն բարձրառու լսելի լինէին ի ներքուստ լանդնդոց և ի վերուստ լողոց «վակ ձոր, վակ ձոր». և կենդանւուն ընկղմնցան ոգիք իբրև տասն հաղար, զորս զիտէին ի թիւ արկին, և զանծանոմիցն ոչ ոք գիտէր զնամարն. լաղազս որու կոչեցաւ անուն գաւառին Վալոց Զորու: Տ. Մտեփ. Օրպէլ. Գ. Լ. Ի. Թ.

(Թ. 726 «Վալոց Զորու ընկղմումն»: Թ. 737 «Շարժ ահազին: Երկու նոր սաստղ երեցան՝ մին լարնելք և մի լարեմուտք: Երկու ամիս օղդ փոշի տեղեաց թիզ մի: Եղեն ցումունք սատեղաց և շարժ սաստիկ: Տ. Մխթ. Արիվանեցի»).

Թ. 800—802 «Յալս ժամանակս եղեւ շարժ սաստիկ. և լերիք կողոտու (Կողատու), որ կան աստի և անտի, հպեցան առ միմեանս, զոր տեսին մարդիկ, և փլաւ լեառն մի և անկաւ լնփրատ, և արգելեաց զնա օր մի, և գնալր զետն ի վեր, և բաղում լերինք խղեցան, և լոլով աղբերք բացան ջրով, և

կալրոլ, և նաւթոլ, և բազում խցան լաղբերացու. Տ. Սամ.Ա-նեցի. (Նոյնը տես Մխ. Ալր. 791 թուին).

Թ. 854. «Նարծ լաղուհացոն, որ ի Դուին, մեռան ի միում գիշերի երկուասան հաղարք»: Տ. Մխ. Ալր.

Թ. 858. «Յամս Զաքարիալի Հալոց կաթուղիկոսի լետ է. ամի գերութանն Հալոց» (տ. Թովմ. Արծր. գ. 22) «լահագին իմն շարժմանց եղելոց ի Դուին քաղաքի բազում սասանութիւնս և վիլուզմունս տանց և պարսպաց և ապարանից լինէր, և առհասարակ քանդումն և դղրդումն առնոլր քաղաքն, ալ և մահ լոլովից մարդկան ի վերալ հասանէր և անպէս ահագին իմն լինէր վտանգ տագնապին, մինչև ոչ ոք մնալ ընդ լարկաւ, ալլ ի հրապարակս և ի փողոցս ելեալ հաշեալ հաւաշէին: Խսկ ցրտաշունչ սառնամանիքն ձմերախնոյն առաել բերէր զլքուցումն հեծութեան, զի հոլովք մսեալք և ծալրատեալք լինէին: Խսկ սուրբ հալրապետն Զաքարիաս ուժ. գին աղօթիւք և պաղատանօք մշաշենամռունչ և աղերսալի աղօթս առ բարեկութն Աստուած մատուցանէր և երկնալին աղեկցութեամբ ի բաց բառնալր զաստուածասաստ բարկութիւնն, անվնաս զեկեղեցին Գրիստոսի պահեալ ի բազմարկեցասմանէ վտանգին»: Տ. Յովի. Կաթ. Իէ.

Թ. 863. «Ի քառասնորդս պահոց ի փոքրիկ շաբաթուն եղև շարժումն ահագին և զբաղումն կոտորեաց և զգեղեցիկ շինուածս տապալեաց, և տեսաց մինչև ի ժամանակս երից ամսոց»: տ. Ստ. Ասող. Բ. Բ. (Նոյնը տես և Սամ. Անեցի 865 թուին):

Թ. 869. «Ի վերեքնարիւր լութեռտասն թուականին Հալոց. եղև անհնարին և հիացուցանող շարժն Դունալ, որ զամ միողջոն դողացեալ խորասուզեաց լանդունդս անձինս իրբն երկու կոտասան բիւր մարդկան»: Տ. Մովս. Կաղ. Գ. 21.

Թուին 893. «Զալսու ժամանակաւ (զերրորդ ամր թագաւորութեանն Ամբատալ ի վերալ Հալոց) ահագին իմն եղակարծում ժամու ստատիկ շարժմանց եղելոց ի գիշերի ի Դուին քաղաքի բազում սասանումն և սարսափումն և դղրդումն և կործանումն զբնակչօք քաղաքին զեղեալ, հիմն ի վեր տապալէր. վասն զի առհասարակ ի վալր վլուզեալ զպատուար պարսպացն, և զապարանս գլխաւորացն, և զտոնս ռամկացն իրբն զերիղուտ վալրս առապարաց լական թօթափել տեսանիւր, Ալլ զաստուածաշէն եկեղեցիս կաթուղիկոսարանին, և

զալ ևս հաստանեղուս վկալարանս դղրդեալ քանդեալ աւե. բեալ ի վալը հոսէին, որ գրեթէ իրը զփապարս վիմուտս զերկաց սարսափելի տեսողացն երևիր, Ալիկ հեղձամդուկ լարկածածակ հողաթաւալ հողանզձուց սատակումն դիակուտ բաղմութեանն, որ կարծրագուն քարեզն և անկարեկիր միտս էր ստացեալ լորդորէր զնա ի բազում ողբս և լորտոսրաթոր կականմունս, թողում ասել զազգակիցս և զկարեկիցս և զլծակից հարազատութիւն մարդկան, որոց կականումն և ողբումն և աշխարումն գուժից ճշոլ և կանչու և կառանչոլ, և աղիողորմ ձանքք երգեցիկ գուսանաց (կուսանաց) և սեազգեաց կանանց և արանց վշտանար հեծութեամբ սզացելոց մինչև Երկինս բարձրացեալ հասանէր, իսկ զբաղմութիւն դիականց ոչ բաւեալ տալ զերեղմանացն, զբազումն ի վիճս և խորափիտս և ի դարափլակս ընկեցեալ լինէին», Տ. Յովհ. կթ. 1.Բ. (տպ. Սրբուաղ). «Այս շարժումն սաստկագոյն որ սղեւամ Զաքար իսլի Հալոց կաթուղիկոսի լեռ Ե. ամի գերութեան Հալոց»: Տ. Թովմ. Արծ. Գ. 22.

Թ. 995. «Հարժեցաւ երկիր, բալց սաստկազոյնս աշխարհն Չորրորդ Հալոց, Հաշտեանք, Խորձեան, Ծոփք, Բալու և Պաղնատուն. Եւ բոլորովին վլան շինուածք ամենալն ի հիմանէ դղրդեալք... հերձան լերինք և պատառեցան վէմք, բացան աղջիւրք լանջրդին տեղիս և ցամաքեցան ելք սովորական ջուրց, դաշտք ծածանէին և լերինք որպէս առ միմեանս խոնարհին. ծխոյ նմանութեամբ՝ փոշուն ծառացելով զօղսն լնոլր. Եւ ամենալն շինուածք քաղաքաց, զիւղից և ագարակաց տապալեալ, զբնակիչսն ի ներքու առնէին, մեռեալս և կիսամեռս զնոսա առնելով, և մնացելոցն կենդանեաց ճիչք լալեաց և վալք ողբոց ի վեր բարձրանալին. Եւ բերդն Բալու հանդերձ շինուածովքն և քարն ևս փլուղանիւր. խարխալեալ ծապաղուր, բերդին Դկլաթալ, Աթթախալ և Ամթալ և ամենալն քարուկիր զեղեղկաչէն եկեղեցեաց և ապարանից. Ալս լինէր լսմեանն Քաղոց ի վերջնումն աւուր. և զալս ձև օրինակի կացեալ ամիսս Ե. մինչև ցնաւասարդ»: Տ. Ստ. Ասող. Գ. 1.Զ.

Թ. 1003—1004. «Եղեւ շարժ սաստիկ ընդ ամենալն երկիր. երերեալ դողաց ամենալն արարած. լահէ և բարբառու բարկութենէն ոչ ժամանէին խոստովանութեան և հաղորդութեան. մարդ և անասուն պակասեցան լերկրէ, և մնացեալ

Հորքոտանիք անմարդ մասցեալ շրջէին ի վերալ երկրիւ Տ.
Մատթ. Ուռհ. Կէ. (նոյնը տ. Սամ. Ան. 1007թ. և Սմբ.
Սպար. 1008թ.)

Թ. 1011. «Նարծ սաստիկ լուաջաւորին, Ընկղմեցաւ
Երզնկա ողջոյն, և մնաց միայն տունն կիրակոսի ողորմածին,
Բաղում եկեղեցիք և բերդք տապալեցանու Տ. Մխ. Ալր.

Թ. 1015. «Եղն շարժ ահաւոր և սոսկալի, և դողացաւ
հասարակ ամենալի տիեզերք... Բազում եկեղեցիք խախտեալ
փլաւ ի հիմանց ի լԵկեղեց դաւառին, և քաղաքն, որ Երզն-
կան կոչի, փլաւ առհասարակ և յալատառեցաւ երկիրն, և արք
և կանալք ընկղմեցան ի խորս անդնդոց, և զաւուրս բազում
գալր ձախն աղաղակի նոցա ի խորսց անդնդոց Եւ էր լամառ-
նալին ժամանակին, և աւուր աւուր շարժէր երկիրն (օւօ) լա-
մին լանմիկ... Եւ լամառնալին ժամանակին խաւար և մութն
լինէր ի վերալ երկրի, մընչեւ արեգակն, և լուսինն ի կերպս
արհան երսէին. և լորժամ ելանէր ի կամարն, լիստակ էր»:
Տ. Մատթ. Ուռհ. Կէ. (նոյնը տ. և Սմբ. Սպար. 1045թ.)

Թ. 1104. «Են հինդհարիւր լիսուն և երեք թուին ի Մա-
րերի երկոտառանն զողաց երկիր հանդերձ աղիողորմ ձախիւ,
որ դալր ի լերանց և ի դարափուլ վիմաց. և օրն էր կիւրակէ
և ձախն վառ... Եւ փլան լուով քաղաքք, և մեռան քառա-
սունհաղար անձինք, զոր թուել կարացինու Տ. Վարդան
պատմ. Կէ. տ. և 1114թ.»

Թ. 1114. «Յամսեանն Մարերի յերկոտասան աւուրն լա-
ւուր կիւրակէին տօնի Խաչ Գիւտին *) եղեւ մեծասաստ ար-
հաւիրք ի վերալ տիեզերաց... մինչ զեռ էաք լավիտակեալ ի
խոր քնոր, եղեւ լանկարծակի ճալթումն և թնդումն ահաւոր,
և զոռակր առհասարակ' ամենալին արարածք, և եղեւ զզրդումն
սաստկապէս և ահազին թնդմամք շարժեցաւ երկիր... և լե-
րինք, և պատառեցան ապառաժ վէմք, և հերձան թլուրք...
Եւ լսելի լինէր ձախն զկնի շարժմանն իրբն զմի ժամ դիշե-
րին. և լանէ բարբառու բարկութեանն ամենալին ոք լուսահա-
տեցաւ ի կենաց և ասացին, եթէ եհաս օր կատարածի և
դատաստանի մերում, զի զախ աւուր զպատկերն ունէր. օրն
էր կիւրակէ, և ձախն ի վառի ձախն էր, և լու-

*) 1114թ. նոյ. 29-ին Ս. Անդրէի տօնի օրը (այլ ոչ Գիւտ Խաչի)
առ. Dulaurier 455.

սինն փուլ էր, զամենալն պատճռու զ վեր ջին առուրն ունէր. և ահա կալին ահաբեկեալ իրրե զմեռեալթ լուսահատեալք, Եւ յասմ գիշերին կործանեցան բազումք քաղաքաց և զաւառաց, և ամենալի որ կործանեցան, էին զաւառք ֆռանկաց և ալդաւառաց կամ ալլազգեաց ոչ եղեւ վնաս և ոչինչ Եւ յասմ գիշերի կործանեցաւ Սամուստ քաղաք և առան Մսուր, Գեսուն, և Ռապան, և Մարաշ քաղաք ահաւոր, և կործանեցան ոգիք իրրե քառասունհազար, զի էր բազմամբոխ քաղաք, և ոչ մնաց ի նոցանէ և ոչ մի, Եւ ալսովէս ի Սիս քաղաք կործանեցաւ անթիւ բազմութիւն արանց և կանանց, և ալլ բազում գեղք և վանորալք, և անհամար արք և կանալք հազարս հազարաց և բիւրս բիւրոց կործանեցան. Եւ եղեւ ի Սեաւ լեառն անուանի, յանապատն որ կոչի Բարսեղեանց, էին ժողովեալ յեկեղեցօրհնէք սրբանեալ կրօնաւորք և վարդապետք Հալոց, և կալին ի պաշտօն Աստուծու, անկաւ եկեղեցին ի վերալ նոցա, և երեսուն կրօնաւորք և երկու վարդապետք կատարեցան ի ներքու նորա, որ կան մինչև ցալսօր, Նոյնպէս եղեւ մերձ ի Մարաշ ի մեծ անապատին, որ ասի Յեսուանց, անկաւ և կործանեցաւ վանքն, և ամենալի դասք կրօնաւորացն. Եւ յորժամ դադարեաց շարժն, սկսաւ ձին գալ, և զամենալն աշխարհ ի ներքու կոտորիացու Տ. Մատթ. Ուռէ. Մժէ.

Թ. 1138.—1139. «Ի հինգհարիւր ութսուն և ութ թուին եղեւ շարժ սաստիկ և կործանեցաւ քաղաքն Գանձակ, և տապալեցաւ շինուածքն որ ի նմա ի վերալ բնակչաց իւրոց... Փլաւ և լեառն Ալհարակ ի շարժմանէն և արգել զձորակն որ անցանէր ընդ մէջ նորա, և եղեւ ծովակ, որ է մինչև ցալսօր, և լինին ի նմա ձկունք ազնիւքու. Տ. Կիրակոս Գանձակեցի, 67.

Նոյն. «Ընդ աւուրսն ալնոսիկ եղեւ յանկարծակի մէզ և մառախուզ, և լցաւ առհասարակ լեառն և դաշտ, և եղեւ շարժ ահազին, և կործանեցաւ մալրաքաղաքն Գանձակ. և շնորհօք Աստուծու ապրեալ եղեւ նորընծաւ կաթովզիկոսն (Աղուանից), բայց մեռաւ ի շարժմանէն մեծ վարդապետն Գրիգոր (Թոքակերի որդի), հանդերձ ալլ բազմութեամբ արանց և կանանց և մանկաւու, որոց ոչ գոյ թիւ, զորս սպանին շինուածքն անկեալ ի վերալ... Փլաւ և լեառն Ալհարակ և կապեաց զձորակ, որ անցանէր ընդ մէջ նորա, և եղեւ ծով որ է մինչև ցալսօր ժամանակիու. Տ. Կիր. Գանձ. 101.

թ. 1138—1139 «ի ՇՋԸ, թվին ի Ժէ. Արեգ ամսոկ շարժ. մամբ կործանեցաւ Գանձակ քաղաք և սուրբ վարդապետքն Գրիգոր և Սարգիս ընկղթեցան, և եկեղեցին Հաղբառալ փըլուղանիու. Տ. Սամ. Անեցի, (Նոյնը տ. Մխ. Ալր. 1141թ.):

թ. 1157. «ի հոկտեմբերի ամսու իջ. սկսաւ շարժ լինել տամնայն երկիր. և բազում քաղաքք տաճկաց ի սահմանս Արաբիոլ, որ է Հալասլ, կործանեցան ի հիմանց. և զաղդս քրիստոնէից պահեաց Տէր մինչեւ ցալժմ. և անդադար լինէր շարժն մինչեւ փոխել թուականիու, որ ոչ կալր համար կամ թիւ շարժմանն զամիսս չորեքտասանու. Տ. Գրիգոր երէց, Մկի.

թ. 1165—1166. «Եղև շարժ լիրդնկալնու. Տ. Սամ. Ան. և Վարդ. Պատմ. (Նոյնը Մխիթ. Ալր. 1161 թուին):

թ. 1236. «Շարժ եղև լորդնկան. եկեղեցի մի փլաւու. Տ. Առ. պտմ.

թ. 1251. «Շարժմամբ կործանեցաւ Երդնկալնու. տ. Մխ. Ալր.

թ. 1261. «ի Կիլիկիալ շարժ եղեւ. «Շարժն եկն ի Վըրացտուն և բազում վիաս արարու. Տ. Մխ. Ալր.

թ. 1268. «Շարժ եղև լիրդնկալն լաւուր կիւրակէի, 15 հազար մարդիկ միռանու. Տ. Առ. պտմ.

թ. 1281 «Շարժ եղև լորդնկան, Աստուած պահեաց, որ ոչ փլաւու. Տ. Առ. պտմ.

թ. 1285. «Շարժն երեկ ի Տիխիսաւ. Տ. Սամ. Ան. Շարլար.

թ. 1287. «Մալիս ամսուն շարժ եղև լիրդնկան, բազում մարդիկք մեռան, որ զթիւն միաւն Աստուած գիտէն. Տ. Առ. պտմ.

թ. 1289. «Շարժմամբ կործանեցաւ Երդնկանու. Տ. Սամ. Ան. Շար. (Նոյնը տ. Առ. պտմ. 1290 թուին):

թ. 1308. «Շարժն տարաւ զվանքն ս. Առաքելոյն թաղէոսի, զեկեղեցին և զվանքն կործանեաց և ՀԵ. հոգի սպանու. Տ. Սամ. Ան. Շար.

թ. 1319—1320. եղև ահազին շարժ լարմելս, և զթառիսս առաքելոյն վանքն և զեկեղեցին կործանեաց, և զտունսըն փլուց, և ՀԵ ոգի եսպան. զոր վերստին շինեաց եկեղեցին և զվանքն տէր Զաքարէ. Ալլ և ի Կեղաքունի ընկղմանաց ըղքազում զեօղս հանդերձ արսմք, և լալ ևս տեղիսու. Տ. Սամ. Ան. Շար.

Թ. 1363. «Շարժն զՄշու երկիրն տարաւ և դվանորաւք խախտեց»։ Տ. Սամ. Ան. Շար.

Թ. 1439. «Հուր անկաւ ի Մըմբուռ սարն և շատ տարի ալրից զան սարերն»։ *) Տ. Նօտ. Հցց. 118 և 127.

Թ. 1458 «Շարժ եղն լերդնկան»։ Լթ. հաղար մարդ մեռաւ. և ոչ ալսչափ միայն, ալլ ԺԶ անգամ շարժ եղեր լերդնկան քան զալս ալլ սաստիկ»։ Տ. Նօտ. Հցց. 187. տ. և Առ. պատմ.

Թ. 1482. «Շարժ եղն լեզնկան»։ Լթ. հողիք մնացին ի ներքու գետնովն»։ Տ. Սամ. Ան. Շար.

Թ. 1543 «Ապրիլի 4 օրն չորեքշաբթի ի լուսանալ առուրն Ա. ժամն սաստիկ շարժ ելաւ. Ողորմնամ փոխին ասելու շափ եղաւ, որ երերաց, և շատ աւեր արաւ»։ Տ. Անդր. Թոփ.

Թ. 1584. «Շարժեցաւ լեզնկան լունիսի Ժ. Գ. ժամուն ս. Լուսաւորչի երկուշաբթի. փլաւ քաղաքն և մեռան ԺԵՌ, արք և կանալք. ԱՌ մարդիկ մնացին ի ներքու երկրի, զորս յերկրէ կիսամահ, ոմանք մեռան և կ'ո խեղեցան»։ Տ. Սամ. Ան. Շար.

Թ. 1641. «Շարժ եղն ի Թավրէզ և վեր շրջակալսն, և փլաւ Շամրազանն և Ուստաչէկերտ ամարաթին»։ Տ. Սամ. Ան. Շար. տ. նոյն և Առ. պատմ. ԼԵ.

Թ. 1646. «Ապրիլ 2 Ա. ագ Ուրբաթու գիշեր սաստիկ շարժ եղն ի քաղաքն Վ.ան, և քաղում մարդիկ մեռան, և շատ աւերութիւն եղեն»։ Տ. Ցիշատ. Ման. 341.

Նոյն. «Մեծ շարժ եղն ի Թավրէզ, Աւ ի սոյն ամին ի շարժմանէ մեծ մասն բերդին Վ.անալ փլաւ»։ Տ. Անդր. Թոփ.

Թ. 1648. «Շարժ սաստիկ եղն ի Վ.ան և ի շրջակալսն իւր, և եկեղեցիք և մզկիթք քաղումք փլան, և կէս պարսպի քաղաքին»։ Տ. Սամ. Ան. Շար. տ. նոյն և Առ. պատմ. ԼԵ.

Թ. 1668. «Ոգոստոսի 7 օրն ուրբաթ Դ. ժամուն խիստ

*) Յալսմ ամի (պղ=1441) մեծ նշան եղն. քանդի լետոն Սամ. բուռ կոչեցեալ, որի մէջ Կլաթ և Բաղէչէ, յանկարծակի գոռաց իրմ զսաստիկ որոտումն ամպու... սարն պատառեցաւ լայն իրը գքաղաք մի և ալլ փոքր փոքր, և ի պատառուածէն ի վեր հուր ցոլացեաւ և լանէր ժառանլազատ ծխով և ժահահոտութեամբ, որ և աղալքն ի հստովն հիւանդանալին, և քարինք եռալին լահազին բոցոյն, և մեծամեծ վէմս ընդ երկինս ձգէին ձոյնիւ որոտմամբ և ալլն, տ. Խնճիճ. Հնախօս. Ա. 106.

մեծ և ահադին շարժ եղեւ, որ ոչ տեսեալ էր և լուեալ բնաւ, զի բազում քաղաք և զիւղը կործանեցան, տունք և ապարանք», Տ. Անդր. Թոխ.

Թ. 1679. «Շարժ լերևան», Տ. Զաք. աարկ. 104.

Թ. 1692. «Ապրիլի 13 լառաւօտէ արեգակն նուազեցաւ և մէդ պատեաց զերկիր անքան, զի մարդիկը մերձ դոլով զմիմեանս ոչ տեսանէին ի ցերեկի. և մինչեւ լերեկոյ կարմիր փոշի տեղեաց ի լերկիր. և եղեւ մարդամահ անդրանկաց, և սաստիկ շարժ», Տ. Յիշատ. Ման. 348.

Թ. 1701. «Մարտի 7 ի մեծ պահոց առաջին ուրբաթն սաստիկ շարժ եղեւ ի քաղաքս Վան, և ի զիշեր ևս շարժ եղեւ, և ի կիրակէն երկու և երեք անգամ շարժ եղեւ, և ի չորեքշաբաթ առաւօտուն ևս սաստիկ շարժ եղեւ որ ամենալին քաղաք ահարեկ եղեալ սասանեցան, և հալ և տաճիկ ամենեքեան թողեալ զտունս իւրեանց ի քաղաքէն ի դուրս կազմեցին վրանս և մնացին տամբք և տղալիւք ոմանք լալդիս, ոմանք ի դաշտս և ի դերեղմանատունս աւուրս բազումս, և սակաւ ոմանք, որ ի քաղաքս մնացեալք էին, գընացեալ ի ժամատունն ննջէին տամբք իւրեանց, և ի միւս շաբաթու օրն դարձեալ ահադին շարժ եղեւ, լորմէ բազում տունք խախտեցան ի մէջ քաղաքին և ոչ փլան, և ոչ մարդու ինչ վնաս եղեւ. սական ի գեղն ჩերդ սակաւ ինչ տուն փլան, Եւ ալսպէս եկաց քաղաքս լորերմանի իրրև զնաւ ի ջուրս մինչն ի օրն գարնանամտին (Տ10), և ապա հանդարտեցաւ Նախախնամութեամբն Աստուծու. Եւ հասեալ ի նոյեմբերի 30 կրկին ևս սաստիկ շարժեցաւ և վնաս ինչ ոչ եղեւ», Տ. Յիշատ. Ման. 352.

Թ. 1704. «Յունվարի 13 մեծ շարժ եղեւ ի քաղաքս Վան. Յունվարի 27 մեծ շարժ եղեւ ի քաղաքն Բաղէշ, և բազում տունք փլան, և շատ մարդիկ ի ներքոյ տանց մնացին»: Տ. Յիշատ. Ման. 358.

Թ. 1707. «Յուլիսի 5 շարժ եղեւ սաստիկ»: Տ. Յիշատ. Ման. 365.

Թ. 1715. «Մարտի 8 լառաւօտէ շարժ եղեւ ի քաղաքս Վան, լորմէ ի լալգիքն սուրբ Յակոբալ վեր տուն մի փլաւ, վեց հոգի տակն մնացին, չորսն մեռան և երկուքն ապրեցան. նաև Բարթուլիմէոս Առաքելոյ գմբէթն թռաւ. և Խօշարալ բերդի բողանն խախտեցաւ, Ղարասարալ բերդի լիշադին

վերալ քօշկն փւաւ և զվիշադն աւերեաց, որ և բաղում մարդկակ ի ներքեւ մնացին, ալ և Սաթմանից քօշկն փւաւ և զբագումս սպան. և ալ բաղում դիւզք տապալեցան, և լորովք մնացին ի ներքեւ, և բաղում վնաս եղեւ Մահմտանալ երկրին.

Ի Արճէշ քաղաքի ի մեծ հինգշարաթի գիշերն առաւտեան ժամուն շարժ եղեւ, որ եկեղեցւոյ գմբեթն անկաւ և 37 մարդ ի ներքեւ մնացին. Բայց խնամօքն Աստուծոյ մինն մեռու և ալ ամեննեքեան ապրեցան, ալ շատքն սաղկատել են», Տ. Ցիշատ. Ման. 368.

Թ. 1791. «Դեկտեմբերի 27 մեծ և ահագին շարժ եղեւ ի քաղաքն Թավրէղ, որ բոլոր քաղաք տապալեցաւ, և անթիւ մարդիկ մեռան, և ի ներքոյ հողին մնացին, որ ականատեսքն ասացին թէ ահագին քաղաքի իրեն բնական բլուր մի եղեւ, որ ամեննեին քաղաքի նշմարանք ոչ երևէին. նաև շրջակալ զասքարակք՝ Խոլ, Որմի, Գունալի, Սալմաստ. և ի քաղաքս մեր Վան ևս շարժեցաւ, և ողորմոյ թեամբ Աստուծոյ ոչինչ վնաս եղեւ» Տ. Ցիշատ. Ման. 398.

8. Գ. Ալս հատուածները քաղել ենք հետեւեալ աղբիւրներից.

Ցովհան Մամիկոնեան, Պատմ. Տարօնոր, Վենետ. 1832.
Մովսէս Կողանկատուացի, Պատմ. Աղուանից, Մոսկով 1860.

Ատեփաննոս Օրպէլեան, Պատմ. տանն Սիսական, Մոսկով 1861.

Թովմա Արծրունի, Պատմ. տանն Արծրունեաց, Ս. Պետ. 1887.

Ցովհաննէս Կաթուղիկոսի պատմութիւն, Երուսաղէմ 1867.
Մատթէոս Ուռենակեցի, Պատմութիւն, Երուսաղէմ 1869.

Ատեփաննոս Ասողիկ, Պատմութիւն, Ա. Պետ. 1885.
Վարդան վարդ. Հաւաքմունք պատմ. Վենետ. 1862.

Կիրակոս Գանձակեցի, Համառ. Պատմ. Վենետ. 1865.
Մամուէլ Անեցի, Հաւաքմունք և ալն, Վաղարշ. 1893.

Նօտարք Հալոց, Ղեռնդ վ. Փիրդ. Կ. Պօլիս.
Մանանալ, Գ. վ. Սրուանձտեանց, Կ. Պօլիս 1876.

Զաքարիա սարկաւագի պատմագր, Վաղարշ. 1870.
Միլիթար Ակրիվանեցի, պատմ. Հալոց, Մոսկ. 1860 ևալն. և. ԿՈՍԹԱՆԵՍԱՆՑ

